

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մարտի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գեղարվեստական երեկո՝ նվիրված հայոց լեզվին:

Հայոց լեզվի ծագման, անցած ուղու և էության մասին հակիրճ տեղեկություններով հանդես եկավ հոգևոր ճեմարանի հայոց լեզվի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Խաչիկ Բադիկյանը:

Ապա հոգևոր ճեմարանի հայ հին և համաշխարհային գրականությունների վաստակաշատ դասախոս Պարգև Շահբազյանը հրավիրեց ուսանողներին հայոց լեզվի մասին բանաստեղծություններ արտասանելու՝ հակիրճ տեղեկություններ տալով հեղինակների մասին և մի քանի բառով վերլուծելով նրանց ըմբռնումը հայոց լեզվի գեղեցկության, տրամաբանական կարողության մասին՝ որպես հայ ժողովրդի ազգային գոյության հիմքը: Ուսանողները մեծ ոգևորությամբ և խորունկ ընկալումով արտասանեցին Ստեփաննոս Նազարյանցի, Ե. Չարենցի, Վ. Թեքեյանի, Սիամանթոյի, Սիպիլի, Վեսպերի, Պ. Սևակի, Ն. Զարյանի, Խ. Դաշտենցի, Ա. Չոպանյանի, Մարկ Ռիժկովի, Միքայել Ռաշիդի, Վաչագան Հովհաննիսյանի ստեղծագործությունները:

Բանաստեղծություններն ընդմիջվում էին հայ և օտար մշակույթի նշանավոր գործիչների ասույթներով հայոց լեզվի մասին:

Ապա օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը, դրվատեց դասախոսների և աշակերտների աշխատանքը և ցանկություն հայտնեց, որ այսպիսի երեկոները հաճախակի դառնան՝ առավել ևս հաղորդվելու համար հայ ոգուն ու հայ մշակույթի արժեքներին:

*
* *

Ապրիլի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական երեկո՝ նվիրված Եղեռնի նահատակների հիշատակին:

Բացման խոսքով հանդես եկավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Կարեն Մաթևոսյանը: Ապա ուսանողները արտասանեցին հատվածներ Ե. Չարենցի «Դանթեական առասպել», Պ. Սևակի «Անլռելի Զանգակատուն» և «Եռաձայն պատարագ», Հ. Շիրազի «Հայոց Դանթեականը», Վահագն Դավթյանի «Ռեքվիեմ» պոեմներից, Սիամանթոյի «Մահուան տեսիլք» և «Արցունքներս», Հ. Թումանյանի «Հոգեհանգիստ», Ռ. Սևակի «Հայրենիքս», Վ. Թեքեյանի «Ողբ» բանաստեղծությունները:

Արտասանություններն ընդմիջվում էին հայ ժողովրդի, նրա պատմության և մանավանդ ողբերգության՝ 1915 թվականի մասին օտար և հայ մեծանուն մարդկանց արտահայտություններով՝ Մաքսիմ Գորկի, Սերգո Օրջոնիկիձե, Սերգեյ Կիրով, Լեփսիուս, Նանսեն, Մորգենթաու, Անատոլ Ֆրանս, Կարլ Լիբկնեխտ, Ավ. Իսահակյան:

Երկու ընդարձակ հատվածներ կարդացվեցին Վեհափառ Հայրապետի՝ Մեծ եղեռնի առիթով հրապարակված կոնդակներից:

Ասմունքի բաժինը եզրափակվեց Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմում հայ ժողովրդին ուղղված ապրելու պատգամով և Հ. Թումանյանի

«Հույսի Հայրենիք,
Լույսի Հայրենիք:
. . . . . .
Իմ նոր Հայրենիք,
Հզոր Հայրենիք»

ոգեշնչող վերջաբանով:

Ապա օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը և կոչ արեց ներկաներին՝ հիշել հայ ժողովրդի ապրած մեծագույն ողբերգությունը և ստեղծագործական կյանքով հաստատել հայ ժողովրդի պայծառ գոյությունը, որի լավագույն առհավատչյան այսօրվա ծաղկյալ Հայաստանն է:

ԹՂԹԱԿԻՑ